



Նախաբան. — Ոմանք սիրում են « Ասիայի Անդրիացիներ » անուանել Ճապոնցիներին. այս մօտաւոր նմանութիւնը ձգտում է ամբողջովին ճշդութիւն օրից օր :

Ահա յաւիտենական նինջով մրափող լաշնածաւալ Ասիայի արեւելեան մասում փոքրիկ Ճապոնը : Անոր չորսդին էլ միայն ծովալիքներն են ծփում իրենց մշտական մոմոոցով : Ահա այդ երկրի նաւահանգստներումն էլ ամէն տեսակ կատարելագործուած նաւեր ծածանում են երփնեւրանդ դրօշները, իրր յառաջադիմող կեանքի նշանակներ . ահա վերջապէս այդ երկրի դրկումն էլ սկսել է ապրիլ մի ժողովուրդ, որ թարմ ու թերով յառաջադիմող իւր քայլերով արդէն մեծ ուշադրութիւն է գրաւել մօտ քասորդ դարից ի վեր :

Երնէ՛կ այդ նորադարձ տենդը բռնկէր ողջ արեւելքը . տիեզերական պատմութեան մէջ մի նոր ու փայլուն էջ բանար . եւ այդ վերածնութեամբ նոր Դանթէներ ու Միքէլ-Անջելօներ ծնուէին, չինական պարիսպներ լրացից հնչեցնէին թարմ ու անկախ գործի հրաւիրող գարիէլեան փողեր, որպէս զի որբ արեւելքը ժպտար վերջապէս :

Անցեալը. — Կղզիների խմբի մէջ բազմած, « Արեւի թագուհուց սեւրած » Ճապոնցիների պատմական հին անցեալը դեռ լուսաբանուած չ'է : Արեւելեան պատկերաւոր դրոշմները, մետաքոէ, զոյնդզոյն շղարշներէ պէս . պատում են դեռ այդ ժողովրդի նախ հնագոյն պատմութիւնը :

Սակայն, առասպելների խորքը թափանցող հայեացքը կ'ըմբռնէ անտարակոյս, որ բաւական հին եւ հետաքրքիր ազգի ժառանգներն են արդի Ճապոնցիները՝ գեղեցիկ գիւցաբանութեամբ ճոխ յիշատակներով :

Մեզ հասած սլամապարութեանց հայելով՝ Ճապոնցիները Քրիստոսից հինգ դար յետոյ արդէն կային, իրր որոշ եւ բաւական ինքնուրոյն ազգութիւն : Քաղաքակրթութեան ներկայ ոստիճանին հասնելու համար նրանք եւս անցան ֆէօդալական խարաղանների տակից, մինչեւ տասնեւերեսներորդ դարու կէսերը՝ գրեթէ մեկուսացած, առանց արտաքին հաղորդակցութեան :

Սակայն 1868-ի յեղափոխութեան շնորհիւ, քայքայածակ իշխանութեան ղեկը վերջնապէս Միկասոյին(*) ձեռքը : Այնուհետեւ եւրոպական

(*) Միկատօ կը նշանակէ կայսր. ստաջ Ճապոնը միաթամանակ երկու ներկայացուցիչ ունէր յանձինս Միկատոյի եւ Շօգունի, մին՝ հոգեւոր, միւսը՝ մարմնաւոր պետ . սակայն 1868-ի յեղափոխութեամբ Միկատոյի կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ եւ Միկատօն նշանակուեցաւ միահեծան տէր ամբողջ Ճապոնի վրայ :